Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1.Անունը, ազգանունը.**

Արսեն Թորոսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը.**

Առողջապահության նախարարի պաշտոնակատար

**3. Գործուղման վայրը և ժամկետները.**

2018 թվական, հոկտեմբերի 24-26, Ղազախստանի Հանրապետություն, Աստանա

**4. Հրավիրող կողմը.**

Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Ալմաթիի դաշնագրի 40-ամյակին նվիրված Առաջնային բուժօգնության երկրորդ միջազգային համաժողովին:

Համաժողովի նպատակն էր հիշատակել Ալմաթիի 1978 թվականի հռչակագիրը, վերանայել բոլոր անդամ-պետությունների և շահագրգիռ կողմերի քաղաքական պարտավորությունները՝ զարգացնելու համար առաջնային բուժօգնությունը Համաշխարհային առողջապահական ծածկույթ ստեղծելու և Կայուն զարգացման նպատակներին հասնելու շրջանակներում, հիմք նախապատրաստել 2019թ.

Համաշխարհային առողջապահական ծածկույթի վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր Ասամբլեայում բարձրաստիճան հատուկ հանդիպում կազմակերպելու համար, ազդարարել 2019-2030թթ. Առաջնային բուժօգնության երկրորդ միջազգային համաժողովի արդյունքում ընդունված փաստաթղթերի իրականացման անհրաժեշտության մասին:

**6. Քննարկված թեմաները.**

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու առողջապահության, ֆինանսների, կրթության, սոցիալական ապահովության նախարարներ, ՄԱԿ-ի անդամ-պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, դեսպաններ, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին առողջության առաջնային պահպանման ոլորտին առնչվող այնպիսի հարցեր, որոնց լուծումը համաշխարհային հանրության և պետությունների միասնական աշխատանք է պահանջում:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի պաշտոնակատար Արսեն Թորոսյանը: Ներկայացրեց առողջության առաջնային պահպանման ոլորտում վերջին տարիներին կատարված աշխատանքներն ու փոփոխությունները: Պատասխանեց հնչեցված հարցերին:

Միջոցառման ընթացքում երկկողմ հանդիպումներ կայացան Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարների հետ:

Վերջիններիս հետ քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, ձեռք բերվեցին կոնկրետ պայմանավորվածություններ համագործակցության շուրջ:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում ընդունվեց առողջության առաջնային պահպանման վերաբերյալ ԱՀԿ գլոբալ համաժողովի հռչակագիր, որը Ալմաթիի հռչակագրից հետո նոր ուղենիշ կհանդիսանա նշված ուղղությամբ աշխարհի բոլոր պետությունների ջանքերը մեկտեղելու ուղղությամբ:

Համաժողովի ընթացքում հանդիպում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի հետ: Քննարկվեցին առաջիկայում ՌԴ-ում կայանալիք հայ-ռուսական 4-րդ համաժողովի կազմակերպման հետ կապված հարցեր, ինչպես նաև՝ հետագա համագործակցության ուղղությունները:

Իրանի առողջապահության նախարարի հրավերով դեկտեմբեր ամսին կկայանա Հայաստանի առողջապահության նախարարության աշխատանքային խմբի այցը Իրան, որը նոր խթան կհանդիսանա երկկողմ պայմանավորվածությունները իրականացնելու համար:

Համաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարների միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր, որը հիմք կհանդիսանա հետագայում խորացնելու համագործակցությունը երկու երկրների միջև առողջապահության ոլորտում: Երկկողմ պայմանավորվածություն ձեռք բերվեց սերտացնելու համագործակցությունը առողջության առաջնային պահմանման, էլեկտրոնային առողջապահության, դեղերի շրջանառության կարգավորման և շարունակական բժշկական զարգացման ոլորտներում:

Ուզբեկստանի հետ կողմերը ընդգծեցին առողջապահության բնագավառում համագործակցություն սկսելու անհրաժեշտությունը, որը կարող է խթան հանդիսանալ նաև մյուս ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացման համար: Ուզբեկստանի առողջապահության նախարարը սիրով հրավիրեց 2019թ. հունվարի 14-15-ը այցելելու Ուզբեկստան, որի ընթացքում կողմերը կնախաձեռնեն միջգերատեսչական համաձայնագրի ստորագրման գործընթաց:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համագործակցության առաջարկները բխում են 8-րդ կետում արծարծված աշխատանքներից: Պայմանավորվող կողմերը ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորությունները իրականացնելու ուղղությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց մշտական դարձնել համագործակցող կողմերի և երկրների կապը:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

30.10.2018

X

VERIFIED OCSP 30.10.2018 14:57:27 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2018թ. հոկտեմբերի 27